Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (II դասարան-8 դասաժամ), օտար լեզվի (անգլերեն-12,5 դասաժամ), երաժշտության (4,5 դասաժամ), կերպարվեստի (5,5 դասաժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), ֆիզիկայի (9,5 դասաժամ), քիմիայի (6 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ), ՆԶՊ-ի (2,5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (15 դասաժամ), տեխնոլոգիայի (երկու խումբ-5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մայիսի 24-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 26-ին, ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ գ. Շվանիձոր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, շենք 4:

Զանգահարել (0286) 95-431, 098089202 հեռախոսահամարներով: